ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«__»_____2024թ. **N_____-Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի N 405-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի մարտի 16-ի «Քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերով սահմանված նորմերի Երևանում իրականացման լրացուցիչ պայմանների կարգը սահմանելու մասին» N 405-Ն որոշման հավելվածի 7-րդ կետի 8.2-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«8.2) շենքերի և շինությունների վերակառուցման և կառուցման աշխատանքների ընթացքում Կառուցապատողը պետք է կազմակերպի վերակառուցվող կամ կառուցվող շենքի կամ շինության արդեն իսկ կառուցված ամբողջ հատվածի 180 գրամ/քմ խտությամբ ցանցով ծածկումը: Կառուցվող կամ վերակառուցվող շենքը կամ շինությունը շինարարության ամբողջ ընթացքում պետք է գտնվի ցանցով ծածկված վիճակում՝ մինչև շինարարական աշխատանքների ամբողջական ավարտը, այդ թվում՝ երեսպատման, շենքի արտաքին հատվածներում բազրիքների և այլ տարրերի ու պատուհանների տեղադրման աշխատանքների կատարումը: Ցանցով ծածկումը պետք է իրականացվի ցանցը կառուցվող կամ վերակառուցվող շենքից կամ շինությունից մինչև 2.5 մետր հեռավորության վրա՝ առանձին համակառուցվածքի (կոնստրուկցիա) վրա ամրացնելու միջոցով,»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի N 405-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Ընթացիկ իրավիճակը, իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը, առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով նախատեսվում է, որ Երևանի քաղաքի ավագանին ի լրումն քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերով սահմանված նորմերի՝ կարող է սահմանել Երևանում գործող նորմերի իրականացման լրացուցիչ պայմաններ:

Հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի պահանջները՝ Երևան քաղաքի ավագանին 2012 թվականի մարտի 16-ի N 405-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) սահմանել է քաղաքաշինաիկան նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերով սահմանված նորմերի Երևանում իրականացման լրացուցիչ պայմանները:

Որոշման հավելվածի 2-րդ կետով սահմանված է, որ լրացուցիչ պայմանները՝ պարտադիր պահանջների և իրականացման ենթակա միջոցառումների համալիր է, որն ուղղված է Երևան քաղաքի շրջակա միջավայրի վրա շինարարական աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու, փողոցների երթևեկության և հետիոտն անցումների անվտանգությունն ապահովելու, ինչպես նաև կառուցապատվող օբյեկտներում շինարարական հրապարակների տարանջատման ու սանիտարական պատշաճ վիճակն ապահովելու ուղղությամբ իրականացվող աշխատանքների արդյունավետության բարձրացմանը:

Նույն հավելվածի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ լրացուցիչ պայմանները տարածվում են այն անձանց վրա (կառուցապատողներ կամ քաղաքաշինական գործունեություն իրականացնելու իրավունք ունեցողներ, այսուհետ՝ Կառուցապատող), որոնց կողմից Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող քաղաքաշինական գործունեության օբյեկտում կատարվող կամ կատարվելիք շինարարական աշխատանքների իրականացման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվում է շինարարության կամ քանդման թույլտվություն (այսուհետ՝ Կառուցապատվող օբյեկտ): Կառուցապատվող օբյեկտում քաղաքաշինական գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող անձինք պարտավոր են պահպանել սույն կարգով սահմանված լրացուցիչ պայմանները շինարարական աշխատանքների իրականացման բոլոր փուլերում:

Հավելվածի 6-րդ կետում նախատեսված են նույն որոշմամբ սահմանված լրացուցիչ պայմանները, իսկ 7-րդ կետով՝ դրանց կատարումն ապահովելու նպատակով իրականացվող միջոցառումների համախումբը:

Մասնավորապես Հավելվածի 7-րդ կետի 8.2-րդ ենթակետով նախատեսված է, որ շենքերի և շինությունների կառուցման աշխատանքների ընթացքում Կառուցապատողը պետք է կազմակերպի շենքերը և շինությունները շինարարությանը համապատասխան բարձրությամբ 180 գրամ/քմ խտությամբ ցանցով ծածկումը:

Գործնականում Երևան քաղաքի շրջակա միջավայրի վրա շինարարական աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել Հավելվածի 7-րդ կետի 8.2-րդ ենթակետը խմբագրել՝ հստակեցնելով և կարգավորելով շենքերի և շինությունների կառուցման աշխատանքների ընթացքում Կառուցապատողի կողմից շենքերը և շինությունները շինարարության ընթացքում ծածկելու պահանջները:

Նախագիծն ուղղված է Երևան քաղաքի շրջակա միջավայրի վրա շինարարական աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու ուղղությամբ իրականացվող աշխատանքների արդյունավետության բարձրացմանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ